



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9245

G.

Uzbek - Urdu

759-  
U-71

4. Mnlhu

1986

2004

2011

ପ୍ରକାଶକ

ବିଜୁଳିମାର୍ଗ  
ପ୍ରକାଶନ କମିଶନ୍

ଟଙ୍କା

୨୬୩

# ପ୍ରକାଶକ - ଆମ୍ବା



ମହାମାର୍ଗବଳୀ

ମହାମାର୍ଗବଳୀ ପ୍ରକାଶକ



କୃତିତ୍ବ

ମହାମାର୍ଗବଳୀ

୧୯୮୬

754  
Մ-71

# ՄԻՔԵԼ ԱՆՃԵԼՈ

Միքել Անճելո ծնաւ 1475 ին հտալիոյ մէջ  
 ֆլորանսի մերձակայքը : Աղքատ բնտանիքի  
 մը կը վերաբերէր : Իւր մանկութենէն ի վեր  
 մասնաւոր սէր մը յայտնեց արուեստից նկատ-  
 մամբ . իւր առաջին փափաքն եղաւ նկարիչ  
 մը լինել հակառակ իւր հօրը կամաց : Հայ-  
 րական յանդիմանութիւնը բնա՛ւ չը վհատե-  
 ցուցին գեռահասակ արուեստագէտը : Վեր-  
 ջապէս խեղճ հայրը ստիպուեցաւ դնել զայն  
 ճարտար նկարչի մը քով և մանուկն այնու-  
 հետեւ կրցաւ դիւրութեամբ մշակելիւր բնա-  
 տուր կարողութիւնները : Ամէն ոք կը զար-  
 մանար իւր ըրած հսկայաքայլ յառաջդիմու-  
 թեանց վրայ : « Ինձմէ աւելի գիտէ » կ'ըսէր  
 իւր վարպետն իսկ :

Միքել Անճելո կ'ապրէր վերածնուքեան գա-  
 րուն մէջ և ժամանակակից էր այնպիսի ար-  
 ուեստագէտներու որք կը վերակենդանացնէ-  
 ին զհնութիւնն նմանողութիւններ ընելով  
 Յունական և Հռովմէական հրաշակերտից և  
 միեւնոյն ժամանակուսումնասիրելով նախնեաց  
 գործերը :

Արդարեւ, նոյն միջոցին Հռովմայ նման, Ֆլորանս եւս Եւրոպիոյ մէջ դպրութեանց և արուեստից կեդրոնն կը նկատուէր և Լոռան տը Մէտիչի անուն նշանաւոր անձէ մը կը կառավարուէր :

Լօռան կը սիրէր զգեղարուեստս. մեծամեծ ծախքերով ի մի վայր ժողվել տուած էր հնութեան գեղեցիկ գործերը, արձաններ, միտայներ, և այլն . . . և աշխարհի վրայ կաղմած էր եղական թանգարան մը ուր ամէն ոք կրնար այցելել:

Կը հրաւիրէր նա իւր պալատին մէջ արուեստագէտներն, գիտունները և գրագէտները. անհուն հրճուանք կ'զդար նոցա ընկերութենէն. կը մեծարէր զայնս և թոշակներ սահմանած էր իւրաքանչիւրին :

Ինքն եղաւ առաջին անգամ Միքէլ Անձէլոյի փայլուն ապագայն գուշակողը: Դեռատի մանկան գծած առաջին նկարներէն հրապուրեալ, Գեղարուեստից Վարժարանը դըրաւ զայն:

Կը պատմեն թէ՝ Լօռան մեծ խնամք կը տանէր իւր պաշտպանութեան ներքեւ եղող շակերտին վրայ: Միքէլ Անձէլ արձանագրած

էր ծերունւոյ գլուխ մը, որոյ բերանը բաց և դէմքը ժպտուն էր: Լօռան ուշադիր ակնարկով մը դիտեց արձանը և մի քանի հաճոյական բառեր արտասանելէն յետոյ, ըստ: « Աւա՛սիկ հազորագիւտ բան մը. ծերունի մը որոյ երեսուն և երկու ակռայները անվասավիճակի մէջ են » այն ատեն Միքէլ Անձէլո հնազանդելով իւր բարերարին, առաւ մկրատ մը և կոորեց ակռայներէն մին, բնութեան լաւագոյնս նմաննելու համար :

Երեք տարի բնակեցաւ իշխանին քով, հետեւելով ամենայն եռանդեամբ իւր ուսմանց: Լուրջ բնաւորութիւն մ'ունէր: Մտաւոր աշխատութիւնք, հնութեան հրաշակերտները, նշանաւոր արանց ընկերութիւնը, այս ամէնը իւր վերայ խորին տպաւորութիւն մը ի գործ դրած էր:

Փոխանակ ինքինքը հաճոյից յանձնելու, կը սիրէր առանձնութիւնը լաւագոյնս իրականացնելու համար այն մեծ խորհուրդները որոնցմով լի էր իւր հոգին:

Գեղեցիկ չէր. իւր գիմագծերն կանոնաւոր չէին և տգեղ դէմք մ'ունէր: Կռուի մը մէջ, իւր ընկերներէն մին ձեռքի զօրաւոր հար-

ուածով մը ջախջախած էր նորա քիթը և իւր գիմաց այդ անչնչելի նշանը յաւիտենական դժբաղդութիւն մ'եղաւ իրեն համար :

Լօրան տը Մէտիչի մեռաւ 1492ին : Միքել Անձէլօ կորսնցուց իւր ճշմարիտ բարեկամը : Ներքին գոհունակութիւն մը կ'զդար երբ կը տեսնէր թէ՝ այլ եւս ուրիշի մը պաշտպանութեան պէտք չ'ունէր :

Տակաւ առ տակաւ սկսաւ նշանաւոր գործեր արտադրել : Ամենուն զարմացման արժանի եղաւ Յիսուսի և Մարեմայ կուսին նըկարը ուր վրձինն այնքան գեղեցիկ կերպով բացատրած է իւր որդւոյն անկենդան դիակը ծնդացը վրայ առնող Աստուածամօր անհուն վիշտը :

Միքել Անձէլոյի համբաւն այնքան տարածեալ էր որ ֆլորանսի բնակիչնք համարձակեցան նմա յանձնել հսկայ գործ մը : Քաղաքին հասարակաց շէնքերէն միոյն մէջ մարմարիոնի ահագին կոյտ մը կար : Հինդ մեթրէն աւելի բարձրութիւն ունեցող այդ մարմարիոնը յանձնուած էր ի հնումն արձանագործի մը որն որ չէր կրցած անտի օգուտ քաղել և այն ժամանակէն ի վեր այդ քարը իբրեւ ա-

նօգուտ և լքեալ առարկայ մը կը մնար : Առաջարկուեցաւ Միքել Անձելոյի որ այդ մարմարիոնին միջոցաւ հսկայ արձան մը շնէ . ճարտար արուեստագէտը սիրով ընդունեց իւր հայրենակցաց առաջարկը և յաջողեցաւ ներկայացնել զջավիտ ի ձեռին ունենալով պարսատիկն իւր սպաննելու համար զԳողիաթիւն գործը վերջացաւ :

Երեսուն տարեկան հասակին մէջ , Միքել Անձելօ ի Հոռվմ կանչուեցաւ Յուլիոս Բ. Պապէն որ իւր նախորդաց նման յոյժ կը սիրէր զարուեստս :

Տասն և վեցերորդ դարը Յուլիոս Բ. ի անուամբ կը յիշուի ինչպէս որ պատմութեան մէջ Պերիկղէսի , Օգոստոսի և Լուդովիկոս թգ. ի դարերը կը յիշատակուին որոշելու համար այն ժամանակամիջոցը յորում մեծամեծ հրաշակերտներ յառաջ եկան գիտութեանց , դպրութեանց և արուեստից մէջ :

Յուլիոս Բ. ինդրեց Միքել Անձելոէ որ իւր գերեզմանը շնէ : Անշուշտ այս գործը արտաքոյ կարդի բան մը պիտի լինէր և չը պիտի ունենար իւր նմանը անցելոյն և ներկային մէջ :

Այդ հսկայ կոթողը պատրաստելու համար Միքէլ Անձէլո իւր կենաց մեծագոյն մասը զոհեց : Եթէ չը կրցաւ ամբողջովին աւարտել գերեզմանը , դոնէ կրցաւ արուեստից հրաշակերտ մը կանգնել :

Այդ հրաշակերտը Մովսեսի արձանն է : Երայական ազգին հիմնադիրը ներկայացնելու համար , Միքէլ Անձէլո դրաւ նորա դիմաց վրայ ինչ որ պատկառելի և վաեմ է . Ոչ միայն ներկայացուցած է զՄովսէս աւելի մեծքան զմահկանացու ոք , այլ և նորադիմագրծերը , հզօր մարմինը , բոցավառ ածքերը , երկայն մօրուսը , այս ամէնը կը պատկերացընէ այնպիսի անձ մը որ մենէ շատ աւելի բարձր է . . . : Կարելի չէ նկատել զայն մեզի նման գործող , կենդանի և զգայուն էակ մը . այնպէս կը թուի մեզ թէ՝ այդ արձանը եթէ կենդանի լինէր , ահաւոր խօսքեր պիտի արտասանէր : Ահա՛ ինչ որ մեծ և դեղեցիկ կը կոչենք :

Միքէլ Անձէլո սկսած էր պատրաստել ուրիշ արձաններ Յուլիոս Բ. ի գերեզմանին համար : Այդ նշանաւոր արձաններէն երկուքը միայն զարմանալի տպաւորութիւն մը ի դործ

դրին ժամանակակից արուեստագէտներու վը-րայ . կը ներկայացնեն երկու բանտարկեաներ և ծանօթ են գերիներ անուան ներքեւ : Գե-ղարուեստից սիրահար անձինք այժմ կրնան տեսնել զայնս Լուվրի թանգարանին մէջ ուր այնքան երկար ատենէ ի վեր կը պահուին իրեւ թանկագին հնութիւններ : Յուլիոս Բ. կրքոտ և խիստ բնաւորութիւն մ'ունէր , ուս-տի և Միքէլ Անձէլո դժգոհ պալատականաց և Պապին վարմունքէն որոշեց թողուլ զՀռովմ: Առ Պապն հրաժեշտի նամակ մը գրելէն յե-տոյ , դիշեր ատեն մեկնեցաւ : Առաւոտեան ժամը երկուքին ձի կը հեծնար և արշաւասոյր կընթանայր խուսաբելու համար Պապին ձեռ-քէն : Շատ լաւ գիտէր ինք թէ՝ Պապն ամէն միջոցներ ի գործ պիտի դնէր վերստին զինք ի Հռովմ բերել տալու համար : Եւ արդարեւ Յուլիոս Բ. երբ իմացաւ իւր սիրելի արուես-տագէտին մեկնիլը , խիստ բարկացաւ և հինդ-սուրհանդակներ անմիջապէս մեկնելով՝ գա-ցին ձերբակալել զՄիքէլ Անձէլո դիւզակի մը մէջ : Տաղանդաւոր նկարիչը հնազանդելով Պապին հրամանաց , վերադառձաւ ի ֆլորանս ուր արժանավայել պատուով մը ընդունուե-

ցաւ ամենէն : Ի՞նչ գեղեցիկ յաղթանակ արուեստագէտի մը համար :

Հաւանականաբար այս հաշտութենէն վերջն է որ Պապը նոր աշխատութիւն մը յանձնեց Միքէլ Անծէլոյի : Իտալիոյ նախկին Պապերէն մին, Սիքսթ Դ. Հռովմայ մէջ մատուռ մը կառուցանել տուած է : Յուլիոս Բ. ի հրամանաւն Միքէլ Անծէլո նկարներով զարդարեց այդ մատրան ձեղունը : Իւր թշնամիք կը բաղմանային և չարախօս բերաններ կը դատապարտէին զինքը : Անվեհեր կերպիւ յաղթեց բոլոր այդ խոչնդոտներուն և չորս տարի անընդհատ մատրան մէջ առանձինն կեանք վարելէն յետոյ , կրցաւ ամենայն յաջողութեամբ աւարտել այն աշխատութիւնը որ պիտի գար տարածել իւր համբաւը : Ձեղունին վրայ ներկայացուց չին կտակարանի տեսարանները , Ագամայ և Եւայի ստեղծագործումը , մարդուն անկումը , ջրհեղեղը և մարդարէները և այլն . . . Իտալիոյ համար հանդիսաւոր օր մը եղաւ այն օրը յորում առաջին անդամ լինելով Սիքսթինի մատրան մէջ պատարագ մատուցուեցաւ և ժողովուրդն ականատես եղաւ այն հրաշալի նկարներուն

զորս Միքէլ Անծէլո դժած էր տոկալով ամենազդի նեղութեանց և արհամարհելով իւր թշնամեաց յոռի վարմունքը : Արուեստագէտին հակառակորդք ստիպուեցան լոել զարմացող ժողովուրդին առջեւ որ կը վարձարէլ թանկագին նուէրներով տասն և վեցերրորդ դարու գեղարուեստից Աստուածը : Միքէլ Անծէլո արժանի էր բոլոր այս վարձարբութեանց . չորս տարի անընդհատ եւ չարաչար աշխատած էր վրձինն ի ձեռին , և գլուխն վայրահակ :

1521 ին , նուիրական պարտաւորութիւն մը կատարեց իւր բարերարին Լօրան ոը Մետիչի գերեզմանը պատրաստելով : Իւր հրաշկերտից կարգն կրնան դասուիլ Մետիչի ընտանեաց համար պատրաստած իւր երկու կոթողները :

Մեծ խնամքով և փութաջան աշխատութեամբ պատրաստեց յիշեալ երկու կոթողները ոյց իւրաքանչիւրին վրայ դրաւ զոյգ մը արձաններ որք կը պատկերացնեն ցերեկը և զիշերը , արշալոյսը և վերջալոյսը : Սոյն հիասքանչ արձանները գեղեցիկ տպաւորութիւն մը ի դործ կը զնեն հանդիսատեսին վրայ և յի-

շեցնել կուտան նմա մարդկային կեանքին  
կարճատեւ լինելը , որ կը սլանայ այնքան շուտ  
որքան դիշերն կը յաջորդէ ցերեկին :

Ներկայացուցած էր նա զգիշերը ննջող և  
տարածեալ կնոջ մը կերպարանքին ներքեւ ,  
և արձանն իւր իտէական ձեւովն , այնքան  
գեղեցիկ կերպիւ պատրաստուած էր որ կար-  
ծես թէ կենդանի և ննջող էակ մ'էր : Մի-  
քէլ Անճէլոյի սիրահար անձ մը հետեւեալ տո-  
ղերը գրած է ննջող արձանին առթիւ :

« Գիշերը զոր կը տեսնէս ննջող կնոջ մը կեր-  
պարանքին ներքեւ , քանդակուած է հրեշտակէ մը  
այդ մարմարինին մէջ (ակնարկութիւն Միշէլ  
Անժի անուան) : Կը ննջէ նա , բայց կենդանի և .  
եթէ չես հասատար , մօտեցիր նմա . պիտի ար-  
բըննայ իսկոյն :

Միշէլ Անճէլօ որ բանաստեղծ էր , պա-  
տասխանեց սրտայոյզ կերպիւ : Այդ միջոցին ,  
իտալիա խոռվութեանց և անկարգութեանց  
մատնուած էր . Փլորանս կը հեծեծէր բռնա-  
ւոր իշխանութեան մը ներքեւ : Տաղանդաւոր  
արձանագործը կը սիրէր իւր հայրենիքը ուս-  
տի և հետեւեալ կերպիւ խօսեցնել տուաւ  
իւր արձանլ :

« Մարմարինէ ստեղծուած լինելուս համար  
բարեբաղդ եմ եւ կը սիրեմ ննջէլ այսպիսի ահա-  
ւոր ժամանակամիջոցի մը մէջ : Քանցը եւ հան-  
դարտ քնոյ մը մէջ լինել , կոյր ըլլալ եւ անկեն-  
դան վիճակ մ'ունենալ : Ենց անհուն երջանուքին :  
Ուրեմն մի դպչի՞ր ինձ , կը խսդրեմ : Լուս , կաց .  
բոյ տուր ինձ որ ննջէմ յաւետ :

Ֆլորանս ապստամբեցաւ և Միշէլ Անճէլօ  
ստիպուեցաւ մասնակցիլ այն յեղափոխու-  
թեան զոր յարուցած էին իւր հայրենակիցք :  
Եւ ահա իրեւ զինուոր և կամ երկրաչափ  
ներկայացաւ ժողովրդեան : Զարմանալի է մի-  
թէ երբ տեսնենք քանդակագործ մը որ մի-  
եւնոյն ժամանակ նկարիչ , ճարտարապետ և  
բանաստեղծ լինի : Բայց Միշէլ Անճէլօ  
երկրաչափ քանդակագործ մ'էր : Բերդեր  
կառուցանել տուաւ . թնդանօթածիգ երի-  
վարներու համար բնակարաններ շինեց և պա-  
տերազմական յատակագծեր պատրաստեց :  
Աւասիկ հազուագիւտ պարագայ մը :

Շնորհիւ իւր յարատեւ և անխոնջ աշխա-  
տութեան , զգալի յառաջդիմութիւն մը ըրաւ  
այն փայլուն ասպարիզին մէջ յորում կը գըտ-  
նուէր : 1530ին , յիսուն և հինգ տարեկան  
էր և տակաւին իւր ֆիզիքական ու մտաւո-  
րական կարողութիւնները չէին խանդ արուած :

1534 ին, Պողոս Գ. Պապը ուղեց մտերմանալ նշանաւոր արուեստագէտին հետ և զայն իւր պալատը կանչել տուաւ : Միքէլ Անձէլօ մերժեց զայս առաջարկ պատրուակելով թէ զբաղեալ էր մի նոր աշխատութեամբ : Այդ գործը Յուլիոս Բ. ի գերեզմանին շինութիւնն էր զոր տակաւին չէր աւարտած :

« Ինչպէս, գոչեց Պապը, երեսուն ամերէ ի վեր կը փափաքիմ զքեզ իմ պալատիս մէջ տեսնել և չեմ կրնար գոհացնել իմ այս բաղձանք : Առ ինչ օգուտ այն կրօնային բարձր պաշտօնը որուն արժանի եղայ, եթէ մերժես առաջարկս : « Եւ արուեստագէտը հարկադրուեցաւ հնազանդիլ և Մովսէսի հրաշալի արձանը աւարտելէն յետոյ, վերադառցաւի Հռովմ: Հո՞ն մեծ ընդունելութիւն մը գըտաւ Պապէն և բարձրաստիճան անձինք պատուեցին զինքը արժանավայել ընծայներով : 1541, Դեկ. 25 ին, Յիսուսի ծննդեանը տօնախմբութեան առթիւ, բարեպաշտ ժողովուրդը ականատես եղաւ մի հիասքանչ նկարի զոր գծած էր Միքէլ Անձէլօ Սիքոթինի մատրան մէջ : Ութ մեծոր բարձրութիւն և չորս մեծոր լայնութիւն ունեցող պատի մը վրայ ներկայացուցած էր վերջին դատաստանին ահաւոր

տեսարանը . հրեշտակն կը հնչեցնէր փողը զարթուցանելու համար մեռեալները, և Յիսուս Քրիստոս առ ինքն կը կոչէր զառաքինիսն, շանթահարելով միեւնոյն ժամանակ իւր բարկութեամբը յանցաւորները :

Միքէլ Անձէլօ յայնժամ վաթսուն և հինգտարեկան էր . աշխատած էր անընդհատ :

Մեծ արուեստագէտը տակաւին չէր դադրած գործելէ . հրաշալի և միանդամայն գեղեցիկ գործի մը ծնունդ պիտի տար այնպիսի հասակի մը մէջ որ ուրիշներու համար հանգըստութեան ժամանակամիջոց մ'է :

Պապերն, դարէ մ' վեր, չէին դադրած նուիրելու բոլոր իրենց խնամքն նոր հրաշակերտի մը շինութեան : Տիբերիոս գետին աջակողմեան ափանց վերայ կը գտնուի գրեթէ կղզիացեալ քաղաք մը որ « կրօնաւորաց բնակավայր » անունը ստացած է : Կը բազկանայ վատիկան կոչուած պալատէ մը ուր կը բնակին պապերը : Այդ հոյակապ և մեծակառոյց շէնքը պապականութեան վերսայլի գլեւեակը կը կոչուի և իւր շինութեան ու զարդարանաց համար Միքէլ Անձէլօ, Ուաֆայէլ, և այլ երեելի արուեստագէտներ աշխատած են :

Բայց պապերը կը փափաքէին նաև պալատին մերձակայքը բարձրացնել եկեղեցի մը Ս. Պետրոսի անուան նուիրեալ։ Սոյն եկեղեցին կաթոլիկութեան հրաշալեաց հրաշալիքը



ՄԻՔԵԼ ԱՆՃԵԼՈ

պիտի լինէր և միւնոյն ժամանակ պիտի պատմէր զփառս Աստուծոյ։ Ի գլուխ հանելու համար յիշեալ հսկայ գործը, յիսուն ամե-

րէ ի վեր կը վասնէին մեծաքանակ գումար-ներ, և սակայն եկեղեցին աւարտելէ խիստ հեռի էր։ Բարելոնի աշտարակին նման անկատար մնացած էր, իբրեւ վկայ մարդկային տկարութեան։ 1847 ին, Միքէլ Անճէլօ, եօթանասուն և երկու տարեկան հասակին մէջ, ճարտարապետի պաշտօն ստացաւ Մայր եկեղեցւոյն կառուցման համար։

Խտալացի քանդակագործը այնքան յաջողակչէր ճարտարապետութեան մէջ։ Արդարեւ, ճարտարապետութիւնը նկարչութեան և քանդակագործութեան նման արուեստ մ'է և սակայն կը պահանջէ այնպիսի գործնական ծանօթութիւններ զորս կարէ ոք ստանալ երկարատեւ ուսումնասիրութենէ մը յետոյ։ Բաւչէ միայն երեւակայել և նկարել հրաշագեղ կոթողներ, այլ պէտք է ոք այդ կոթողներն հաստատուն լինին և միեւնոյն ժամանակ հիմունք կարենան դիմադրել վերին մասանց ծանրութեան։ Ամէն ոք կրնայ պարհսպներ կանգնել, քարերու կոյտեր կազմելով։ Բայց եթէ կամար մը, ձեղուն մը կամ գմբէթ մը հաստատուի, յայնժամ ճարտարապետի մը ներկայութիւնը խիստ օգտակար է։ Նա միայն գիտէ իւր արուեստին գաղտնիքը և ամէն միջոցներ ի գործ կը դնէ դայն պատահական արկածներէ զերծ պահելու համար։

Սառւգիւ Միքէլ Անձէլոյի վերջին աշխատութիւնը խիստ դժուարին էր : Զը վհատեցաւ նա, հրամաւեց գործաւորաց բանակի մը, իւր հսկողութեան ներքեւ առաւ շէնքը և եռանդուն երիտասարդի մը նման յաջողեցաւ կատարել Պապին փափաքը : Եկեղեցւոյն վրայ գմբէթ մը բարձրացնելու խորհուրդն յայտնեց ամենուն :

Գմբէթը տեսակ մը կիսագնդաձեւ կամար մ'է որ կը բարձրանայ շէնքի մը վրայէն : Ա. Պետրոսի գմբէթը զոր Միքէլ Անձէլո բարձրացուց հսկայական գործ մ'է : Խաչին ծայրը հողէն 132 մեթր բարձրութիւն ունի : Փարիզու Նօթրը Տամ Եկեղեցւոյն աշտարակները որք 66 մեթր բարձրութիւն ունին, խաղալիկ մը կը կարծուին լինել բաղդատմամբ յիշեալ գմբէթին հետ :

Մեծանուն քանդակագործը չը կրցաւ իւր գմբէթը ամբողջովին աւարտած տեսնել : Տակաւ առ տակաւ կը տկարանար ամաց բեռին ներքեւ ընկճեալ : 1564, Փետր. 12, շաբաթօրը առաւոտէ մինչ ցերեկոյ աշխատած էր . Փետր. 14, երկուշաբթի օրը, չը կրցաւ անկողնէն ենել, և յաջորդ ուրբաթ կարճատեւ հոգեվարքէ մը յետոյ կը մեռնէր 89 տարեկան հասակին մէջ :



Մ. Գ. Մ09.Ե0.ՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ ԳՈՐԾԵՐԸ

## ՎԱՐՁ ԵՐԵՒԵԼԻ ԱՐԱՆՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԵԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Այս օգտակար հաւաքածոյն կը խօսի ամեն ազգի  
երեւելի մարդոց վրայ : 12 տետրի բաժանորդագրու-  
թիւնն՝ 10 դամեկան :

Բաժանորդագրութեան տեղին և Պերպետուան նշան  
գունդի տպարանը :

Հ Ն Դ Մ Ա Մ Լ Ո Վ

Մեծն Աղեքսանդր :

Բնագիտուրիւն Բ. տարի :

Բնական պատմուրիւն, Ա. Է. Բ. տարի :

Նոյնանշանք Ֆրանսերիւն յեզուի :

Նախական ծանօթուրիւնը. մանուկներու համար :

Գին մէկ դահեկան

Հրամանաւ մէարիթի

ՀՀ Ազգային գրադարան  
NL0010231



